«Grassroots» ծրագրերի դրամաշնորհային աջակցություն ՖՏ 2026

«Լոռու մարզի Սպիտակի բժշկական կենտրոնին ակնաբուժական վիրաբուժական սարքավորումներ և հիվանդների տեղափոխման տրանսպորտային միջոց տրամադրելու» ծրագրի ստորագրման արարողություն

Երևան, 2026թ. նոյեմբեր 13

2026 թ. նոյեմբերի 13-ին Լոռու մարզի Սպիտակի բժշկական կենտրոնում տեղի ունեցավ «Լոռու մարզի Սպիտակի բժշկական կենտրոնին ակնաբուժական վիրաբուժական սարքավորումներ և հիվանդների տեղափոխման տրանսպորտային միջոց տրամադրելու» (մինչև 135,650 ԱՄՆ դոլար) ծրագրի դրամաշնորհային աջակցության պայմանագրի ստորագրման արարողությունը: Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Առկի Յուտական, Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարար Ն.Գ տիկին Անահիտ Ավանեսյանը, Լոռու մարզպետ պարոն Արեն Մկրտչյանը, Լոռու մարզպետի տեղակալ պարոն Արսեն Ղարիբյանը, Սպիտակի բժշկական կենտրոնի տնօրեն բժշկուհի Վարդուհի Սիսակյանը, «Սպիտակի ԵՄՔԱ»-ի գործադիր տնօրեն տիկին Ալվարդ Մկրտչյանը, ինչպես նաև կառավարության պաշտոնյաներ և կենտրոնի բուժանձնակազմը:

Ծրագրի նպատակն է բարելավել բժշկական միջավայրը և առողջապահական ծառայությունների հասանելիությունը Լոռու մարզում՝ տրամադրելով ճապոնական արտադրության (NIDEK) ակնաբուժական վիրաբուժական սարքավորումներ և հիվանդների տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոց: Այս ծրագրի շնորհիվ տարեկան մոտ 1100 բուժառու կստանա ժամանակակից ակնաբուժական վիրաբուժական օգնություն, իսկ 1800 բուժառու հնարավորություն կունենա անցնելու կանոնավոր ախտորոշում կամ ստանալու շարունակական բուժում: 2026 թ. հունվարին Հայաստանում համընդհանուր առողջապահական ապահովագրության ներդրմամբ պայմանավորված՝ աճել է առողջապահական ծառայությունների պահանջարկը՝ բժշկական ծառայությունների հասանելիության բարելավմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, ներկայումս Լոռու մարզում, այդ թվում՝ Սպիտակի բժշկական կենտրոնում, առկա չեն ակնաբուժական վիրաբուժական սարքավորումներ, ինչի պատճառով բուժառուները ստիպված են լինում բուժման համար մեկնել Երևան: Ուստի, այս ծրագիրը լուծում է տարածաշրջանում ժամանակակից սարքավորումների պակասի հրատապ խնդիրը::

«Սպիտակի ԵՄՔԱ»-ի գործադիր տնօրեն տիկին Ալվարդ Մկրտչյանը, իր երախտագիտությունը հայտնելով, նշեց. «Ճապոնիայի կառավարության աջակցության շնորհիվ Սպիտակի բժշկական կենտրոնը հնարավորություն կունենա մատուցել ժամանակակից ակնաբուժական վիրաբուժական ծառայություններ և ապահովել հիվանդների տեղափոխումը»: Շնորհավորական ուղերձ հղեց նաև դեսպան Առկի Յուտական՝ նշելով. «Սպիտակը յուրահատուկ և սիրելի տեղ է զբաղեցնում հայ-ճապոնական հարաբերություններում, և ես իսկապես հպարտ եմ, որ Ճապոնիան շարունակում է կանգնել այս համայնքի կողքին: Տրամադրելով

ճապոնական արտադրության՝ ակնաբուժական վիրաբուժության համար նախատեսված գերժամանակակից սարքավորումներ և հատուկ տրանսպորտային միջոց՝ մենք նպատակ ունենք ապահովել, որ կատարակտի՝ կյանքը փոխող վիրահատություններն իրականացվեն հենց այստեղ՝ Սպիտակում՝ տեղի ընտանիքներին պարգևելով երկարատև առողջություն և անդորր»:



Դրամաշնորհային պայմանագրի ստորագրում



Դեսպան Առկիի ելույթը



Ջերմ ընդունելություն՝ հազար թղթե կռունկներով



(Ձախից)

Դեսպան Առկի,

Պարոն Մկրտչյան (Լոռու մարզպետ),

Ն.Գ տիկին Ավանեսյան (ՀՀ Առողջապահության նախարար),

Բժշկուհի Սիսակյան (Սպիտակի բժշկական կենտրոնի տնօրեն)

և տիկին Մկրտչյան («Սպիտակի ԵՄՔԱ»-ի գործադիր տնօրեն)